

լով թէ քրիստոնեայ են իրենց գերեզմաները: «Ա-
նոնց ոսկը ինկան, կ'ըսէ պատմիչը, կրկին կրկին աղա-
ղակելով «Բրիսսոնեա՛յ, Բրիսսոնեա՛յ, Յիսուս Քրիստոս,
Սուրբ Մարիամի ողի»:

Նամակներ և պարգեւներ փոխանակուեցան
տեղւոյն հրամանատարին հետ, որ ըսաւ թէ իրենց մէջ
գոյութիւն ունեցող մարգարէութեան մը համաձայն,
քրիստոնեաներ օր մը պիտի գան ծովէն և իրենց պի-
տի օգնեն Արարներու գէմ:

Հապէշները հարցուցին Փորթուգալցոց, թէ
կը ճանչնա՞ն «Ապոււնա» Մատթէոս անուն հայ մը, որ
նթովպիայէն դեսպան զրկուած էր Փորթուգալ:

Փորթուգալցիները, որոնք կասկածանքով
նայեր էին մինչև այն ատեն Մատթէոսի վաւերա-
թուղթերուն վրայ և իրենց հետ միասին բերեր էին
զինքը, այլեւս ապահովուեցան: Արտիէթոյի բնակիչ-
ները եկան զինքը դիմաւորելու: Մերձակայ բարձր
լեռան մը վրայ հաստատուած Բիսանի վանքին վա-
նականները երբ տեսան Մատթէոսը, ուրախութեան
արցունքներ թափեցին և բարեկամական արտայայ-
տութիւններով շնորհաւորեցին անոր ողջամբ վերա-
դարձը, տասը տարուան երկար բացակայութենէ մը
վերջ: Կայսեր ներկայացուցիչը եկաւ զիրենք դիմա-
ւորելու, սակայն անցնող 10 տարիներուն Արեւելքի
մէջ շատ բան փոխուած էր: Եգիպտոս ինկած էր
Թուրքերուն ձեռքը (1517ին), և մահմետականները,
քաջալերուած, սաստկացուցած էին իրենց թշնամա-
կան յարձակումները Հապէշիստանի դէմ և առժամեայ
յաջողութիւններ ունեցած: Յետոյ, սակայն, Դաւիթ
թագաւորը չափահասութեան հասած էր և կորովի ու
յանդուգն հակադարձակողականով մը յաջողած՝ Ատենի
իշխանին և ուրիշ մահմետական պետերու դէմ փա-